ՀԷՍՍԷՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ARMENISCHER
KULTURVEREIN
IN HESSEN e.V.

Gegründet 1968
Gemeinnütziger Verein

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt

Շրջաբերական թիվ 1 / 2014

Վարչութիւն/Der Vorstand
Ֆրանկֆուրտ, 2014թ. հունվարի 30

Սիրելի միութենականներ և հայրենակիցներ,

Հէսսէնի Հայ Մշակութային Միության վարչությունը սիրով Ձեր ուշադրությանն է ներկայացնում միության հետագա ծրագրերը.

2014թ. փետրվարի 15-ին,
շաբաթ՝ ժամը՝ 17:30-ին



ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆԻ» ՇՈՒՐՋ

Հայ կինոյի շարքից կցուցադրվի «Նռան Գույնը» կինոնկարը՝ նվիրված հայտնի ռեժիսոր **Սերգեյ Փարաջանովի ծննդյան 90-ամյակին**:
Ծրագրի հեղինակ և վարող՝ «Հայֆիլմ»-ի նախկին աշխատակից՝ **Ալեքսանդր Մելիք-Ստեփանյան**: Հասցեն՝ միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2014թ. փետրվարի 22-ին,
շաբաթ՝ ժամը 17:00-ին

ԲԱՑ ԴԱՍ

«Անի – հազար եկեղեցիների մայրաքաղաք»: Հեղինակ և վարող՝ **Գեորգի Ավետիսյան**, ճարտարապետության մագիստրատուրա:
Հասցեն՝ միության հանդիպման վայր, Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2014թ. մարտի 1-ին,
շաբաթ՝ ժամը 15:00-ին

ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԵՎ ՏԱՐԵԿԱՆ ՎԿԱՅԱԳՐԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ

Շաբաթօրյա դպրոցի սաներին կհանձնվեն տարեկան վկայագրերը, և միասնական կնշենք բարեկենդանը զանազան խրախճանքներով, խաղերով, երաժշտությամբ և համեղ ուտեստներով: Ուրախ կլինենք, որ բոլոր մասնակիցները ներկայանան դիմակավորված և զգեստավորված:
Հասցեն՝ Gemeindesaal, Alt-Hausen 3-5, Frankfurt/M.-Hausen:

2014թ. մարտի 30-ին,
կիրակի՝ ժամը 12-00-ին

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ
Այն կմատուցի Հոգեշնորհ Տ. Սերովբէ Վարդապետ Իսախանեանը՝ տալով օրվա պատգամը: Պատարագից հետո եկեղեցուն կից սրահում՝

ժամը 14:00-ին

ՀՈՒՇ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ 1915թ. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 99- ՏԱՐԵԼԻՑԻՆ՝ միության շաբաթօրյա դպրոցի աշակերտների մասնակցությամբ: Ծրագրի հեղինակ և վարող՝ **Անահիտ Մուրադյան,** լեզվաբանության և գրականության մագիստրատուրա:
Հասցեն՝ Ֆրանկֆուրտ-Հաուզենի եկեղեցի՝ Alt-Hausen 3-5, Frankfurt/M.-Hausen:

* (հնարավոր են ծրագրի փոփոխություններ, հետևեք մեր ինտերնետային կայքին՝ www.armenia.de)

Միության հանդիպման վայրը բաց է ամեն շաբաթ օր՝ 15:30-ից մինչև 19:00:
Միության **հայկական շաբաթօրյա դպրոցի դասընթացները** շարունակվում են ժամը 15:45 - 17:30: Լրացուցիչ առաջարկվում են նաև **պարի**, **հայ կերպարվեստի** և **նկարչության** դասընթացներ՝ սկսած ժամը 17:45-ից: **Երգչախմբի** պարապմունքները շարունակվում են ամեն շաբաթ օր՝ սկսած ժամը 17:00-ից:
Միության հասցեն՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

--------- **տեղեկություններ** --------- **տեղեկություններ** --------- **տեղեկություններ** ---------

2014թ. հունվարի 18 - Հանրահայտ ջութակահար **Սերգեյ Խաչատրյանը** շվեցարական Credit Suisse բանկի կողմից ճանաչվել է որպես «աշխարհի լավագույն երիտասարդ երաժիշտ»: Այդ մրցանակի սահմաններում նա հրավիրվել է նաև մասնակցելու Լուցերնում կայանալիք փառատոնին և հանդես գալու «Wiener Philharmoniker» սիմֆոնիկ նվագախմբի հետ:
Սրտանց շնորհավորում ենք մեր հայրենակցին՝ Սերգեյ Խաչատրյանին :

******

SEPA բանկային համակարգային փոփոխություն - Փետրվարի 1-ից սկսած դրամական փոխանցումը եվրոպական երկրների միջև կհեշտանա: Միության անդամների տարեկան անդամավճարի փոխանցումը ավտոմատ կերպով կփոխանցվի նոր SEPA-համակարգին: Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ հաջորդ շրջաբերականից:

******

2014թ. մարտի 9-ին՝ կիրակի ժամը 14:00-ին - Հէսսէնի Հայ Մշակութային Միության ընդհանուր ընտրական ժողով: Հասցեն՝ միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

******

2014թ. ապրիլի 24-ին՝ հինգշաբթի - 1915. ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 99-ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ Մայնի Ֆրանկֆուրտում: Մանրամասն տեղեկություններ՝ շուտով մեր ինտերնետային կայքում՝ www.armenia.de և հաջորդ շրջաբերականում:

******

2014թ. հունիսի 6-ին՝ ուրբաթ - Գերմանիա - Հայաստան ֆուտբոլային խաղ Մայնց քաղաքում: Մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ավելի ուշ՝ մեր ինտերնետային կայքից՝ www.armenia.de:

******

Միության միջոցառումների լուսանկարները մեր ինտերնետային կայքի տեղադրման համար. ցանկացողները կարող են դիմել վարչությանը հետևյալ էլեկտրանային հասցեով. info@armenier-frankfurt.de, որից հետո կստանան հատուկ կոդ՝ նկարները տեղադրելու համար: